1902

ԱՍՏԾՈ ՍՊԱՌՆԱԼԻՔԸ

Այժմ ես կրգամ, ասում է Աստված,
Օգնել աղքատին իր ծանրը կրովում.
Ձեմ թողնի նրան հավիտյան լքված,
Նա ինձ ապավեն կանչեց նեղ օրում։

Վա՛յ ձեզ, հրզորներ, որ իր խրրճիթում
Լացացրիք խեղճին, այրուն ու որբին,
Ու վես, անպատիժ՝ ասիք ձեր սրտում –
Ո՞վ է վերևից նայում մեր ճամփին։

Մի՞թե կարծում եք՝ չէր տեսնում, լրսում,
Նա, որ ստեղծեց և աչք, և ականջ.
Մի՞թե կարծում եք՝ ուժն էր պակասում,
Եթե համբերեց դատելուց առաջ։

Իմ աչքերն անթարթ ձեր ճամփի վրրա –
Հրսկել եմ անքուն ես ձեր գործերին,
Էլ չեմ դանդաղիլ – գալիս եմ ահա,
Ես, Տեր զորությանց – և հուրն իմ ձեռին։

Ես հուր եմ ձրգում ճրնշվածի հոգին –
Նորա համարձակ լեզվով ձեզ դատեմ,
Ես ուժ եմ տալիս աղքատի բազկին,
Նորա թիկունքին՝ գալիս եմ ձեր դեմ։